ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/10» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 14-ը մարտի 2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-րդ դասի խորհրդական Ա. Գրիգորյան:

Բացակայում էր՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյանը (ԳԱՊ:)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Հանձնաժողովի նիստը նախագահող ընտրելու մասին.
2. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Հանձնաժողովի նիստը նախագահող ընտրելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 Հանձնաժողովի նիստը նախագահող ընտրել հանձնաժողովի գնահատող անդամ ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյանին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Էլիտ Կապիտալ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին <Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ> ՍՊԸ-ի, Ա/Ձ Համլետ Հովսեփյանի և <Արտաշատի պահածոների գործարան> ԲԲԸ-ի կողմից հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ <Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը լիարժեք չեն՝ բացակայում են ծանոթության բաժնում նշված պահանջները: Ա/Ձ Համլետ Հովսեփյանի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը լիարժեք չեն՝ բացակայում են ծանոթության բաժնում նշված պահանջները, ինչպես նաև բացակայում է 26.02.2015թ. կնքված ՇՀԱՊՁԲ-7/16-4 ծածկագրով պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերը: <Արտաշատի պահածոների գործարան> ԲԲԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը լիարժեք չի՝ բացակայում են ծանոթության բաժնում նշված պահանջները: Հրավերով որպես նմանատիպ է սահմանվել մսի և տարբեր տեսակի մսաբուսական պահածոների մատակարարման պայմանագրերը: <Արտաշատի պահածոների գործարան> ԲԲԸ-ի կողմից ներկայացված 2017թ. հուլիսի 1-ին կնքված N 07/07 ծածկագրով պայմանագիրը գնահատող հանձնաժողովի կողմից չի համարվել որպես նմանատիպ պայմանագիր:

Հանձնաժողովը կասեցրել է նիստը և մասնակիցներին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են շտկված անհամապատասխանությունները: 17.03.2018թ. ժամը 16:00-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց.

<Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ> ՍՊԸ-ի և Ա/Ձ Համլետ Հովսեփյանի ներկայացրած շտկված անհամապատասխանությունները գնահատող հանձնաժողովը գնահատել է հրավերի պահանջներին համապատասխանող:

<Արտաշատի պահածոների գործարան> ԲԲԸ-ն հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է համատեղ գործունեության պայմանագիր «ԷԼԻՏ ԳՌԻՊ» ՓԲ ընկերության հետ, ինչպես նաև ներկայացրել է «ԷԼԻՏ ԳՌԻՊ» ՓԲ ընկերության և 3-րդ կազմակերպության միջև կնքված սննդամթերքի գնման պայմանագիր, այնինչ մրցույթի մասնակցության հայտով չէր ներկայացրել, որ <Արտաշատի պահածոների գործարան> ԲԲԸ-ն հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով, որի հիման վրա էլ գնահատող հանձնաժողովը մերժել է նրա հայտը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց 8-րդ չափաբաժնով ընթացակարգը հայտարարել չկայացած, քանի որ հայտերից ոչ մեկը չի համապատասխանու հրավերի պահանջներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 17.03.2018թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց Ա/Ձ Համլետ Հովսեփյանի, <Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ> ՍՊԸ-ի և <Էլիտ Կապիտալ> ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Տ. Հարոյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան

17.03.2018թ